ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 113- Ա 18 հունիսի 2015 թ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. ,,Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա,, ՓԲԸ տնօրենի արձակուրդում գտնվելու պատճառով ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Պողոսյան Ա. - Մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության պետ հանձնաժողովի նախագահ
Մուշեղյան Յու. - Մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության պետ,
Սարգսյան Ն. - Մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության պետի տեղակալ
Հովհաննիսյան Բ. - Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Մինասյան Կ. - հանձնող
Մուսոյան Լ. - ընդունող

2. Հանձնաժողովին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև ,,Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա,, ՓԲԸ նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ